ՀՀ Գեղարքունիքի մարզ Ն. Գետաշենի

Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ

դպրոց

Տնօրեն՝ Արմինե Ղումաշյան

Կերպարվեստի ուսուցչուհի՝ ՆեկտարՍահակյան

“Պատանի նկարիչներ” խմբակի ծրագիր

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ
Պատանի նկարիչներ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ / ԴԱՍԱՐԱՆ
Հիմնական դասարաններ(5- 9-րդ,10-14 տարեկան, կերպարվեստի կաբինետ)

ԺԱՄԱՔԱՆԱԿ
(Շաբաթական 2 ժամ , տարեկան 68 ժամ)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Կերպարվեստի խմբակի կարևորությունը կայանում է նրանում, որ արվեստն՝ ընդհանրապես և կերպարվեստը հատկապես ,իրենց մեջ խտացնում են շրջապատող իրականության ամենատարբեր երևույթները , այդ թվում <<մարդ շրջապատող առարկայական աշխարհ>> բազմաբնույթ փոխհարաբերությունները , իրենց վրա են ստանձում անձի կրթության և դաստիարակության առանցքային դերը;Իր յուրահատկության և բովանդակության , ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ <<Կերպարվեստը>> կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը , զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝

1.Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը
2.Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը:
3. Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայմանը:
4.Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը
5. Ազգային – հայրենասիրական և մարդասիրական զգացումների , բնապաշտության արմատավորմանը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ներկայացնել սեփական ստեղծագործությունը, տալ գնահատական ընկերների ստեղծագործություններին, մտքերը կարողանա ճիշտ արտահայտել:
2. Ձևավորել և զարգացնել գեղեցիկը տեսնելու , զգալու, գնահատելու , պահպանելու և արարելու ցանկությունը և կարողությունը:
3. Նպաստել և սովորեցնել գործնականորեն կիրառել գեղարվեստական գործունեության ընթացքում ձեռք բերած գիտելիքները և կարողությունները:
4. Արժևորել ստացած գիտելիքները,կարողանալ գնահատել ազգային և համամարդկային արժեքները ,արվեստի գործերը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խմբակի անդամները կկարողանան՝

1. Կարգավորել և պահպանել աշխատանքային տարածքը:
2. Կստեղծեն նկարներ ըստ գաղափարի և թեմայի:
3. Կփորձարկեն տարբեր նյութեր հետաքրքիր աշխատանքներ ստեղծելու նպատակով, կոլաժներ,ապլիկացիաներ ծավալային աշխատանքներ:
4. Կկարողանան ստանալ գեղանկարչական ,գրաֆիկական, ծավալային պատկերներ:
5. Կմեկնաբանեն, կվերլուծեն սեփական, ինչպես նաև ընկերների նկարները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ/ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
(տարեկան/ամսական/կիսամյակային)

Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄԱՔԱՆԱԿ	ՆՇՈՒՄՆԵՐ
1.	Թեմատիկ նկարչություն՝ Աշուն	Դաստիարակել սեր հայրենի բնության նկատմամբ,պատկերավոր մտածողությունը,հիշողությունը:	2	
2.	Դեկորատիվ նկարչություն՝Տառեր	Զարգացնել հմտություններ տառերը զարդարարական եղանակով նկարելու:	2	
3.	Հայաստան՝երկիր դրախտավայր:	Դաստիարակել սեր հայրենիքի նկատմամբ:	2	
4.	Թեմատիկ նկարչություն՝ Բերքահավաք	Երեխաների մեջ ձևավորել թեմատիկ նկար ստեղծելու կարողությունը:	2	
5.	Թեմատիկ նկարչություն՝Ոսկե աշուն	Ցույց տալ երեխաներին աշնան գեղեցկությունը բնության մեջ, նկարներում,երգերի մեջ:	2	
6.	Հեքիաթի ձևավորում՝Անբան Հուռին	Զարգացնել երևակայությունը,կերպարները տիպային նկարելու կարողությունը:	2	
7.	Թեմատիկ նկարչություն՝Գյուղական Բնանկար	Զարգացնել գյուղի նկատմամբ զգացմունքաարժեքային վերաբերմունքի ձևավորմանը:	2	

8.	Զրույց կերպարվեստի մասին	Ծանոթացնել Մինաս Ավետիսյանի և Դեղձ Աշոտի ստեղծագործություններին:	2	
9.	Նատյուրմորտ՝Մրգեր	Կարողանան բնօրինակը ճիշտ, համաչափ թղթի մեջ նկարել և ստանալ ծավալ:	2	
10	Բնանկար՝Լեռներում	Զարգացնել հեռանկարով լեռնային բնանկար ստեղծելու կարողությունները:	2	
11	Ազգային տարազ	Ուսումնասիրել ազգային հագուստը,ստեղծել պարի խմբի համար հագուստ:	2	
12	Ազգային պար՝ Քոչարի	Կարողանալ նկարել պարող մարդկանց շարժումներ,հագուստ՝ ազգային զարդանախշերով:	2	
13	Թեմատիկ նկարչություն՝ Ձյուն է գալիս	Կարողանան պատկերել ձմռան գեղեցկությունը՝ օգտագործելով կապույտի երանգները:	2	
14	Մարդու մարմնի պատկերում	Զարգացնել մարդու մարմինը շարժման մեջ, կանգնած նկարելու կարողությունները:	2	
15	Մարմնամարզություն	Կարողանան պատկերել մարդկանց շարժումները խաղի ժամանակ:	2	
16	Դեկորատիվ նկարչություն՝Դիմակներ	Զարգացնել հանդեսի համար դիմակներ պատրաստելու ունակությունները:	2	
17	Նատյուրմորտ՝Սենյակային ծաղիկներ	Զարգացնել առարկաների խումբ նկարելու հմտությունները,հաշվի առնելով հեռանկարի կանոնները:	2	
18	Զրույց՝Դիմանկարի ժանր	Ծանոթացնել մեծ վարպետների ստեղծագործություններին,երբ են ստեղծվել ամենահին դիմանկարները:	2	
19	Իմ ընկերոջ դիմանկարը	Կարողանան բնօրինակից նկարեն դիմանկար,արտահայտեն դեմքի բնորոշ գծերը ,գույները:	2	
20	Ճանապարհ դեպի եկեղեցի	Հեռանկարով ճիշտ նկարեն եկեղեցին, շրջապատի բնությունը:	2	
21	Ազգային ծեսեր	Ծանոթանան հայ ազգային ծեսերին՝տըրնդեզին,որը հնագույն ծեսերից է,կարողանան արտահայտեն ուրախ տրամադրություն:	2	
22	Դեկորատիվ նկարչություն	Կարողանան բնական ձևերը փոխեն դեկորատիվ ձևերի:	2	
23	Ձևավորել՝ Ձախող Փանոսը հեքիաթը	Զարգացներ երևակայությունը, կերպարները ճիշտ նկարելու կարողությունը:	2	
24	Ապլիկացիա՝ Վիշապը	Կարողանան տարբեր նյութերով վիշապի կերպար ստանալ:	2	

25	Նկարել կենդանիներ	Սերմանել սեր կենդանիների նկատմամբ:	2	
26	Ես խնամում եմ կենդանիներին	Կարողանան ճիշտ կոմպոզիցիոն լուծումներ տալ,ստեղծել միջավայր:	2	
27	Մայր իմ անուշ ու անգին	Սեր արթնացնել հարազատի նկատմամբ, դիմանկարի միջոցով արտահայտել սերը մոր նկատմամբ:	2	
28	Թեմատիկ նկարչություն՝Մետաքսի ճանապարհը	Հիշողությամբ, պատկերացմաբ նկարել պատմական թեմայով նկար,նվիրված Մետաքսի ճանապարհին:	2	
29	Դեկորատիվ կոմպոզիցիա՝ Տիեզերք	Կարողանալ օգտվել հնագուն տիեզերական սիմվոլներից՝ ստեղծելով տիեզերքի սեփական ընկալումը:	2	
30	Դեկորատիվ պաննո՝ վերացական թեմայով	Զարգացնել ընկերներով միասին խմբային աշխատանք ստեղծելու կարողությունները,համագործակցությունը:	4	
31	Զրույց՝ Հայկական մանրանկարչություն	Տալ գաղափար մանրանկարչության մասին ,ծանոթացնել հայտնի մանրանկարիչների աշխատանքներին:	2	
32	Նկարել մանրանկարներից հատվածներ	Կարողանան զգալ մանրանկարի հմայքը, գեղեցկությունը և նկարեն:	2	
33	Թեմատիկ նկարչություն՝ Գարունը մեր փողոցում	Գույների միջոցով արտահայտեն գյուղի գարունը , գեղեցկությունը:	2	
1.				

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

1.Բաղդասարյան Ք. Մ. Կերպարվեստի դասեր 1-3 դասարաններում, Երևան1986

2.Գյուլմիսարյան Ե.Ս. Արվեստի պատմություն ,ուսումնական ձեռնարկ, Եր նան,<<Վահան>>,2003թ.

3.Թերզյան Ս.Ս. Գեղանկարչության տեխնիկական միջոցները, Երևան 1985

4.Հակոբյան Հ.Հ. Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, ՀՀ ԳԱԱ,<<Գիտություն>>,1997

Ղազարյան Լ.Մ. կերպարվեստի դասերը 1-3-րդ դասարաններում Երևան 1979թ.

5.Ներսիսյան Լ.Ա. Կրթություն և գեղագիտական աշխատանք <<Զանգակ-97 >>

6.Ներսիսյան Լ.Ա., Ամյան Տ.Է., Սարգսյան Ս.Մ. Կերպարվեստ-2, դասագիրք , Երևան, <<Զանգակ -97>>,2002թ.

Ներսիսյան Լ.Ս. Կերպարվեստ և գեղագիտական աշխատանք, 1-3 դասարաններ,Ձևաբանական ուղեցույց , Երևան,2004, <<Զանգակ -97>>

ՊԱՀԱՆՁՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Դպրոցում կա առանձնացված կերպարվեստի կաբինետ, որը կահավորված է անհրաժեշտ նկարչական պարագաներով, դիդակտիկ նյութերով, համակարգչով, ինտերնետ կապով:

Տնօրինության կողմից պարբերաբար համալրվում է կաբինետի գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան:

Կաբինետում գործում է մի փոքրիկ անկյուն, որտեղ մշտական ցուցադրության է ներկայացված մեր պատանի նկարիչների ձեռքբերումները՝ միջազգային և հանրապետական տարբեր մրցույթների ժամանակ ստացած ոսկե մեդալներ, գլխավոր մրցանակներ, տարբեր կարգի դիպլոմներ: